***ՆԱԽԱԳԻԾ***

# *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

# *ՈՐՈՇՈՒՄ*

«___»_____________ 2018 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշմամբ հաստատված հավելվածի N 2 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ***

***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

### ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

| Հ/Հ | ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՍՏՈՐԱԳՐՈՒ-ԹՅՈՒՆԸ | ԹՎԱԳՐՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ | Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | |
| 2. | ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ | Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ | | |
| 3. | ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ | Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| 4. | ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ | Ա. ԼԱԶԱՐՅԱՆ | | |

*Առաջարկությունները և առարկությունները՝* ______________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________

***Նախագիծը ներկայացնողը՝***
***ԱՀ գյուղատնտեսության նախարար*** ***Ժ. Միրզոյան***

«____» ________________ 2018 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
2018 թվականի N______-Ն որոշման

*«Աղյուսակ*

***N 2***

***Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները***

| Հ/հ | Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը | Նախատեսվում է մշակել (հա) | Ցանքսի կամ տնկման նորմա (կգ, հատ/հա) | Համախառն բերք (տ) | Անտոկոս փոխառության և անհատույց դրամական միջոցներ (ՀՀ դրամ) | Ապրանքանյութի պահանջը (կգ, հատ) | Ապրանքանյութի արժեքը (ՀՀ դրամ) | Անհատույց դրամական միջոցների կամ ապրանքանյութերի տրամադրում (ՀՀ դրամ) | ՆՆՓ փորձաքննություն (ՀՀ դրամ) | Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ) | Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ) | Ինոկուլյանտի արժեքը (ՀՀ դրամ) | Պարարտանյութի արժեքը (ՀՀ դրամ) | որից | | Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | ֆոսֆոր | կալիում | |
| 1 | Կաթիլային համակարգ | 481 | | | 719252000 | | | | 3000000 | 14000000 | | | | | | 736252000 |
| | Եգիպտացորեն (հատիկ) | 1352 | 20 | | | 27035 | 45959500 | | | | | | | | | 45959500 |
| | Եգիպտացորեն (սիլոս) | 187 | 30 | | | 5610 | 9537000 | | | | | | | | | 9537000 |
| 2 | Հնդկացորեն | 1250 | 80 | | | 100000 | 54000000 | | | | | | | | | 54000000 |
| 3 | Արևածաղիկ | 3250 | 5 | | | 16250 | 77675000 | | | | | | 73290000 | 24430000 | 48860000 | 150965000 |
| 4 | Սոյա | 200 | 55 | | | 11000 | 6930000 | | | | | 650000 | 4200000 | 1400000 | 2800000 | 11780000 |
| 5 | Կտավատ | 2740 | 50 | | | 137000 | 95900000 | | | | | | 19180000 | 19180000 | | 115080000 |
| 6 | Առվույտ | 400 | 20 | | | 8000 | 13600000 | | | | | | | | | 13600000 |
| 7 | Ռայգրաս | 34.4 | 35 | | | 1204 | 2408000 | | | | | | | | | 2408000 |
| 8 | Ոլոռ | 100 | 200 | | | 20000 | 7600000 | | | | | | | | | 7600000 |
| 9 | Սիսեռ | 170 | 100 | | | 17000 | 9860000 | | | | | | | | | 9860000 |
| 10 | Ոսպ | 100 | 120 | | | 12000 | 13200000 | | | | | | | | | 13200000 |
| 11 | Լոբի | 10 | 100 | | | 1000 | 300000 | | | | | | | | | 300000 |
| 12 | Ծխախոտ | | | 3525 | | | | | | | 35250000 | | | | | 35250000 |
| 13 | Բանջարեղեն | 500 | | | | | | 100000000 | | | | | | | | 100000000 |
| 14 | Կարտոֆիլ | 200 | | | | | | 30000000 | | | | | | | | 30000000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *10974* | | *3525* | *719252000* | | *336969500* | *130000000* | *3000000* | *14000000* | *35250000* | *650000* | *96670000* | *45010000* | *51660000* | *1335791500* |

»:

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ***

***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

***ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ***

***Անհրաժեշտությունը***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Բուսաբուծության համալիր զարգացման շրջանակներում ոռոգման կաթիլային համակարգերով իրականացվող միջոցառման համար նախատեսված ֆինանսական միջոցները ավելացնելու անհրաժեշտությամբ:

***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***

««Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության 2018 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-46-Ն օրենքի հիման վրա Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գյուղատնտեսական միջոցառումների իրականացման նպատակով լրացուցիչ տրամադրվել է 485 000 000 ՀՀ դրամ, որից 300 000 000 ՀՀ դրամը նախատեսվում է ուղղել ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրմանը:

***Նպատակը և բնույթը***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նպատակն է ավելացնել Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում ոռոգման կաթիլային համակարգերով իրականացվող միջոցառման համար նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը և այդ ծավալը համապատասխանեցնել «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի ցուցանիշներին:

***Ակնկալվող արդյունքը***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կստեղծվեն նախադրյալներ հնարավորինս շատ հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու համար:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք***

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի և իրավաբանական բաժինների կողմից:

***Այլ տեղեկություններ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱՐԱՐ*** ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

**ՏԵՂԵԿԱՆՔ**
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ*** ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

***ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ***
***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ***

***ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ***
***ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ***

***Որոշման նախագծի անվանումը՝***

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

***Նախագիծը ներկայացնողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

***ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝***

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

***Նախագիծը պատրաստողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

____________________ ***Հ. Հակոբյան***

(ստորագրությունը)

«_____» ______________ 2018 թ.